




Un. EnryuG

OnluC



129
ИС. ЗПГЗШ

(1926. V. 447)



БОЧШ

891.995
4.83

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВСТОРОННЕДЕЛЯ
РАДИОФИЗИКИ
НАУК
СССР

№ 229

С 1926 г. № 30 MAY 2011

№ 10

ԴՐԱՄԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 10

Մ

360

891.995

գ - 83

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻՆՍԻՏՈՒԹԵԱ
ԽՈՏՈԽԵԴԱՆԱ
Բանական Խորհ
ՀԽՍՀ

ԾԱՎԱՆ



Հ.Ս.Խ.Հ.

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

№ 308

ՄՈՍԿՎԱ

1925

ԾՈՎԱՆՑ

1.

Յեղբայրների մեջ կոիվ եր ընկել:

Յերկու ամիս առաջ, այսինքն հոր մահից անմիջապես հետո, յերբ նրանք իրենց ունեցածը բաժանեցին յերկու հավասար մասի — ավելացավ մի կով հորթը հետը. Մեծ յեղբայրը գտնում եր, վոր կովը իրեն կհասնի, վորպես ավագի, վոր ավելի աշխատանք ու յերախտիք ունի տան վրա: Փոքրը, ընդհակառակը, պնդում եր, վոր կովը պիտի մնա իրեն, իրու կրտսերի, վոր ավելի քիչ ե ոգտվել հայրենական տնից:

— Եղանակ ես հարգում մեծիդ հա՞, ասում եր ավագը:
— Բա դո՞ւ, պատասխանում եր կրտսերը:

Մեծը զարմանում եր փոքրի աղահության վրա, փոքրը՝ մեծի աչքածակության: Ու վեճը շարունակվում եր այսպես յերկու ամիս, և յերկու ամիս շարուրակ նրանք կովը խլում եյին իրար ձեռից ու փախցնում ամեն մեկն իր գոմը: Բայց քանի վոր ժամանակը գարուն եր և չեր կարելի կովը որերով տանը փակել, ուստի մի կամ յերկու որ հետո նորից խառնում եյին նրան դաշտ գնացող նախընին: Յերեկոյան դեմ, սակայն, յերբ կովը դառնում եր հանդից — ամեն մեկն աշխատում եր փախցնել նրան իր դուռը: Այս բանը կրկնվում եր գրեթե ամեն յերեկո թե՛ յեղբայրների և թե նրանց կանանց կողմից: Իսկ շատ հաճախ փախցնում եյին հորթին, վոր անկարելի լինի մորը կթել: Բայց վորովհետև այդ կովը, — ավելի լավ ե տանք նրա անունը — ծովանը՝ շատ համեստ կովերից եր՝ թույլ եր տալիս կթեն իրեն և առանց հորթի: Նա առանձնապես համակրում եր մեծ յեղբոր կնոջը. կթելու ժամանակ նա կուրծը չեր սեղմում, ինչպես փոքր տիրոջ կինը, այլ յերկու մատով ինսամքով հուպ եր տալիս պտուկները և շուտ-շուտ կաթ քսում նրանց: Այս բանը ծովանին շատ եր դուր գալիս, ու ամեն անգամ հանդից դարձին — ուղիղ մեծ յեղբոր դուռն եր գնում — դեպի հին գոմը: Նա, ասենք, անհորթ կթել թույլ եր տալիս և փոքր-տիրոջ կնոջը, բայց մեծ դժկամությամբ: Յերբ այդ բարձրացրած կինն իր չոր մատներով ձիգ եր տալիս պտուկները՝ ծովանը՝ ցավից բարձրացնում եր մեջքը, աչքերը խփում եր և վոտները վեր ու վար անում: Յեվ կովի

Նկարներն ու շապիկը՝ Գ. ՔՈԶԱՐԻ



59611-66

այս արարմունքը ջոկ-ջոկ բարկացնում եր յեղբայրերին և նրանց կանանց:

Սատկելու անսասուն ա, սատկելու, — ասում եյին նրանք հուղված, և ծեծում եյին նրան. յերեմն մեկի բակում կթվելու միջոցին մյուս բակից քարով, փայտի կտորտանքներով խփում եյին նրա կողերին, մեջքին, գլխին: Յեկ կովը տարակուսած չեր հասկանում ինչո՞ւ համար ե այս բոլորը. ինչ գարունը բացվել ե ինքը վոչ մի այգի, վոչ մի բանջարանոց չի մտել, յերեխայի հարու չի տվել, վորեւ խոտի գեղից չի կերել: Մտածում եր, մտածում և վոչինչ չեր հասկանում: Ու տերերի բարկությունը մեղմելու համար՝ աշխատում եր վորքան կարելի յե հնապանդել նրանց, վոտ շարժել կթելու ժամանակ՝ վորքան ել պտուկները ձիգ տան:

Բայց վորքան ավելի եր հնապանդում—այնքան ավելի եյին բարկանում տերերը: Յեկ Ծովանը մնում եր մոլորված:


Դա մի կարմիր կով եր—յեղջուրների ծայրերը յետ գնացած: Մեջքն ուղիղ եր, յետկի մասը փոքր ինչ տափակ՝ թամբի նման, վիզը հաստ եր, բոխախը կախ, գլուխը դիք, ձախ ականջի ծայրը կտրած եր նշանի համար, իսկ աջ ազգը խարանած «Ա» տառով, վոր առաջին հայացքից պարզ չեր յերեռում և թվում եր շան կծածի հետք: Յեկ վորովինետե ջահել եր—մազերը կով եյին ու փայլուն՝ ոծած վարսերի նման: Կուրծը մեծ եր ու սպիտակ. յերբ քայլում եր ավելի յեր մեծանում և աչքի ընկնում կարմիր փորի տակ: Մաքրասեր ու սակավապետ եր. աղքոտ տեղեր յերբեք չեր նստի. անձրեների ժամանակ սիրում եր կանգնել բաց տեղ և թախծոտ աչքերով նայել այդ զարմանալի ջրին, վոր թափվում եր վերեկից հայտնի չե ում ձեռքով և ինչո՞ւ համար: Առաջ նա շատ ուրախ և աշխույժ եր. կպատահեր, որինակ, պողերով ցելերը քանդելով և գլուխը թեքած՝ կըկովեր հասակակիցների հետ, կհաղթեր, կհաղթվեր, բայց յերբեք չեր կորցնի իր զգացթությունը: Վերջին յերկու ամիսը, սակայն, տիրությամբ խուսափում եր այդպիսի կըսիմերից: Այժմ նրա խոշոր աչքերը լի եյին անհուն թախծով ու տիրությամբ: Արոտի ժամանակ նրա աչքերը հաճախ արցունքում եյին և նա, մոլորված՝ կանգնում եր մտածումների մեջ ընկած: Մտածում եր տերերի վերաբերմունքի մասին և խորը հառաջում քթածակերով: Հառաջում եր ու հիշում իր ջահել որերը, յերբ բոլոր անեցիներն այնպես փայտայում եյին իրեն, չիշում եր— յերբ հորթ եր, ուրախ թոշկոտում եր, մտնում տերերի տուն, շոր եր ծամում, ջուր եր խմում ամաններից... և տերերը յերբեք չեյին ծեծում

իրեն: ի՞նչ լավ եր... չիշում եր Ծովանը և այն որերը, յերբ առաջին հորթըն եր ծնել... Ո՛, ի՞նչ որեր եյին... ի՞նչպես եյին խնամում իրեն մինչև ծնելլ: Տերերը՝ խմբով, ջոկ-ջոկ, գալիս կանգնում եյին կողքին և մեղմությամբ, քնքանքով շփում իր մեջքը, գլուխը, կողքը, յերբեմն ձեռ եյին տալիս կրծին, վոր զարմանալի կերպով ուռչում մեծանում եր որեցոր... Ո՛, յերբ ձեռ եյին տալիս կրծին, ի՞նչպես խուտուտ եր գալիս, ցավում... Բայց ի՞նչ քաղցր եր այդցավը: Հապա առաջին կիթը... Դա զարմանալի բան եր: Տերերը՝ մեծ, փոքր, հավաքվել եյին իր շուրջը: Մեծ տերը քորում եր իր մեջքը, իսկ նրա կինը կթում եր՝ կուրծը շփելով... Ա՛խ, այդ որը, ի՞նչ լավ եր: Կուրծը թեկ ցավում եր, բայց ցավը քաղցր եր նոր կանաչի նման: Այդ որերը յերեխաները հաց եյին տալիս իրեն, իսկ մեծերը բերում եյին մի շատ համեղ ուտելիք, վոր ջուր եր— ջուր չեր, բայց ջրի պես եր և մեջը հացի կտորներ եյին լինում: Հապա՝ յերբ հանգից գալիս եր տուն— ի՞նչ իմնդությամբ, ուրախության ինչ աղմուկով եյին զիմավորում իրեն...

Իսկ ինչո՞ւ հիմա բոլորը փոխվել են այսպես: Ի՞նչո՞ւ նրանք ել թշնամի են դարձել... Ծովանը տերերից բացի մյուս մարդկանց համարում եր թշնամի: Տերերը պաշտպանում են իրան, քույրերին, մորը, հորաքույրերին. խոտ են տալիս, ձմեռը ջրում են, սրբում են գոմը և քորում իրենց, իսկ թշնամիները— չեն թողնի դունչդ մեկնես մի գեղի, անցնես արտերի, բանջարանոցների միջով կամ կողքով. յեթե անցար՝ քարով, փետով կխվեն, կծեծեն, տուն զանեն: Ահա թե ինչ են թշնամիները... Բայց թե ինչո՞ւ տերերն ել թշնամիների պես են դարձել— Ծովանը չեր հասկանում: Նա զըտնում եր, որինակ, վոր ինքը հին գոմում պիտի մնա, բայց թե ինչո՞ւ հին գոմի կողմը գնալու ժամանակ փոքր տերը բարկանում եր— չեր հասկանում. հետո՝ կովը միշտ իր հորթի մոտ կերթա, բայց թե ինչո՞ւ իրեն ծեծում են հորթի մոտ գնալու համար— ելի չեր հասկանում... Մտածելով տերերի վերաբերմունքի մասին՝ Ծովանը հաճախ մտաղրվում եր տուն չդառնալ, սակայն հորթին հիշելով, նրա կուրծը տաքանում եր և նա մտածում եր, վոր անկիթ մնալով, կուրծը կարող ե ուռչել այն անգամվա նման, յերբ արտն ընկերու պատճառով «տուն արին» իրեն և յերկու որ փակեցին մի փլեկ մարագում: Ո՛, ինչպես եր ցավում այդ որն իր կուրծը... Նման մտածումներով տարված՝ նա յերբեմն չեր նկատում, վոր նախին արգեն առաջ և անցել: Սթափելով՝ ինքն ել պոչը խփում եր մեջքին և հետեւում կովերին:

Բայց մի որ ահա ի՞նչ պատահեց:

Յերեկո եր: Ասձրեւ Ծովանը մոր, մորաքույրերի և ընկերունիսերի հետ հանդից վերադառնում եր տուն: Բոլորն ել թրջված եյխն, հոգնած. շտապում եյխն կթվել և հանգստանալ: Նախը տաղակից գնում եր Ծովանի մայրը՝ իր ահազին կուրծը փորի տակ ուրորելով: Միրում եր նա գնալ այդպես՝ բոլորի առաջից և գյուղի ճայրը հասնելուն պես բառաչել—«մենք գալի՛ս ենք»... Այդպես բա-



ռաչում եր մեկ ել աւանը մոտենալիս: Յեվ նրա ձայնի վրա տերերը դուրս եյխն գալիս կովերին դիմավորելու: Այս անգամ ամենից շուտ նրանց առաջ յելավ ջահել տերը: Յերբ հասան տուն—Ծովանը, ինչպես միշտ, այս անգամ ել մոր հետ թեքվեց դեպի մեծ տիրոջ բակը—դեպի իին գոմը, ուր գտնվում եր հորթն այդ որը. գոնե առավոտն այնտեղ եր թողել: Հազիվ մի յերկու քայլ եր արել, փոքր տերը ձիպոտը ձեռին առաջը կտրեց: Ծովանը կանգ առավ և փորձեց անցնել մյուս կողմից: Զահել տերը կրկին առաջը կտրեց և ձեռի ձիպոտը վրա բերեց: Ծովանը զլուխը փախցրեց, բայց ձիպոտը հանկարծ իջավ գլխին: Նա յեղջյուրների մեջտեղը

սաստիկ ցավ զգալով՝ կանգ առավ աչքերը խփած: Մի բոպե թվաց, թե հողը շարժվում է և ինքն ընկնելու ե ահա: Սակայն ուշքի յեկավ անմիջապես մեջքին ու կողերին զիպչող հարվածներից: հասկացավ, վոր իին գոմը գնալը դուր չի գալիս տիրոջ և հնագանդեց: Շուրու յեկավ ու բեկված սրտով քայլեց տիրոջ առաջից:

Այդ յերեկո նրան կթեց փոքր տիրոջ կինը, կթեց առանց հորթի, ելի պտուկներն ու կըծի մազերը ձիգ տալով: Իսկ կթելուց հետո բակի տավարից զատեցին նրան ու գոմն արին:

Ամբողջ գիշեր նա չկարողացավ հանգստանալ. զլխի մեջտեղը և պտուկների արմատներում խուլ ցավեր եր զգում:

Առավոտը նույնպես կթեցին առանց հորթի, դարձյալ ցավեր պատճառելով: Բոլոր ժամանակ Ծովանն իրեն պահեց և մի անգամ իսկ վոտ չշարժեց: Բայց յերբ կիթն ավարտվեց և տանտիրուհին կովկիթը ձեռին մտավ տուն՝ նա թափ տվեց կապը—կտրեց և շտապեց իին գոմի կողմը:

Հորթը... այնտեղ ե, արդյոք, թե մի բան ե պատահել:
Գոմի դուռն ամուր դրված եր: Նա մզգած—ըմմ...

— Ըմմ, պատասխանեց հորթը ներսից:

Այս ժամանակ Ծովանը զլխով հրեց դուռը և մտավ ներս: Հորթն ընդառաջ վազեց և մտավ մոր փորի տակ: Թեև կրծում կաթ չկար, բայց թույլ տվեց, վոր հորթը ծծի: Իսկ մինչև այդ ինքը, հորթերի մսուրում խոտ նկատելով՝ մսուեցավ համն առնելու: Հազիվ մի բերան եր արեւ, յերեւ ներս մտավ մեծ տանտիրուհին, նա, վոր ահնակես լավ կթում եր իրեն:

— Այ կով, այ կով, կանչեց:

Ծովանը բոստան ընկածի պես զգաց իրեն. արածից ամաչելով՝ ուզեց դուրս գալ, բայց տանտիրուհին չթողեց:

— Ի, հողեմ գլուխդ, բարկացավ, իմ խոտն ուտում ես, վոր ուրիշին կաթ տա՛ս:

Ու ձեռի թոկով խփեց Ծովանին:

Թոկի ծայրը, վոր յերկաթե ողակ ուներ, դիպավ նրա կողքի վոսկորին, և զրանից Ծովանն այնպես վատ, այնպես ծանր ցավ զգաց, ինչպես ազդը խարանելու ժամանակ: Այսուամենայնիվ կըրկին փորձեց դուրս գալ, բայց տիրուհին դարձյալ չթողեց: Նա դուռը փակեց, հորթերին տարավ հորթանոցը, իսկ իրան՝ Ծովանին կապեց մսուրից: Յեվ ամբողջ որը նա մնաց գոմում փակված: Բոլոր ժամանակ կողքի վոսկորը ցավում եր: Սովը մի կողմից, ցավը մյուս՝ սաստիկ անհանգստացնում եր նրան, և նա մտածում եր տերերի վերաբերմունքի մասին. ինչո՞ւ հենց միայն իր հետ են

վաս վարվում, ինչո՞ւ հապա մյուս կովերին չեն ծեծում և գոմում փակում։ Դուրսն այնքան կանաչ կա, իսկ իրեն չոր խոտ են տալիս։ Մայրը, քույրերը և ընկերուհիները արածում են հիմա անտառում, իսկ ինքը...

Նա մի քանի անգամ բարձրածայն բառաշեց, դռան յետել կանգնած մզզած, մզզաց, վոր մեկը գա դուռը բաց անի, բայց վոչ վոք տերերից չմոտեցավ գոմի դռան և վոչ մի տավար չպատասխանեց նրա բառաշին...

Նա հուսահատված, գլուխը թափահարելով կանգ առավ՝ աչքերը փոքրիկ լուսամուտին։

«Չե, այսպես չի կարող շարունակվել. պետք եւ դաշտ գնալ...» մտածեց նա։

Յեվ ահա նույն որը յերեկոյան, յերբ տանտիրուհին արձակեց նրան, տարավ բակում կթեց ու խառնեց կովերին,—Ծովանը քաշվեց մի կողմ ու սկսեց հարեան ցանկապատի յեղինջները կրծել։


Ու, այդպես, յեղինջները կրծելով՝ դուրս յեկավ փողոց։ Այդտեղ ել՝ փողոցի յեղերքին բուսած կանաչները պոկելով՝ թեքվեց մյուս փողոցը։ Իսկ յերբ արգեն աննկատելի յեր դարձել՝ քայլերն արագացրեց։

Հորթը, յետ ու առաջ ընկնելով՝ հետեւեց մորը։
Յեվ մի քանի բոպեյից նրանք դուրս յեկան դաշտը։

3.

Մութը հետզհետե թանձրանում եր դաշտի վրա. հեռվում անտառն յերեռում եր սև, մեծ-մեծ դեղի նման, թամին այնտեղից բերում եր մի քաղցր հոտ՝ կանաչների և տերենների բուրմունք, վոր գրգռում եր Ծովանի ախորժակը։ Յեվ նա արագ-արագ գնում եր գլուխը բարձր բռնած, ականջները խլած։ Թվում եր շտապում եւ հասնել առաջ անցած նախրին։ Իսկ հորթը բոլոր ժամանակ յետ ու առաջ ընկնելով, վոստվոստալով՝ հետեւում եր մորը և, յերբեմն, դունչը մտացնում նրա կրծին։ Մայրը սակայն կանգ չեր առնում նրան կաթ տալու, նա կանգ չեր առնում և դաշտում արածելու։ Ի՞նչ կար այդտեղ՝ դաշտում—անհամ արտեր ու անհամ գետնախնձոր, վոր ձին ել չի ուտում։ Ուրիշ բան եւ անտառը... Ու Ծովանը գնում եր դեպի անտառ և իր մզզոցով շարունակ խրախուսում հորթին—հետեւել իրեն։ Յեվ հորթը յեռանդով հետեւում եր նրան. սակայն դաշտի կիսում սկսեց մորից յետ ընկնել։ Նրան հաճելի, շատ հաճելի յեր մոր հետ ճամփորդել, բայց դժվար եր... Այդքան յերկա՞ր ճանապարհ—յերբեք չեր գնացած։ Տեղտեղ փո-

սեր եյին, տեղտեղ քարերը ցավեցնում եյին կձղակները, ու մայրն ել այնպես արագ եւ գնում... Մի յերկու անգամ նա հոգնած կանգ առավ։ Յեվ Ծովանն ամեն անգամ յետ եր դառնում, դունչը մոտեցնում հորթի գնչին, մզզում—խրախուսում հետեւելու։ Մի տեղ, տեսնելով հորթը դժվարանում ե, յետ դարձավ և սկսեց լիզել նրա դլուխը, յերեսը։ Դրանից հետո հորթը շարունակեց ճանապարհը, յերբեմն նույնիսկ մոր հետ հավասար քայլելով։



Ու մինչեւ անտառ գնացին առանց կանգ առնելու։ Իսկ անտառի մոտ Ծովանը կանգնեց, խորը շնչեց քթածակերով ու սկսեց բուրջ անել—քշտել ծառերի տերենները։ Դրա հետ միաժամանակ նա ականջները խլած, շուտ-շուտ նայում եր շուրջը—արդյոք տերերը չեն հետեւում իրեն... Վոչ-վոք չկար։ Ներքեմից ձայն, վոտնաձայն չեր լսվում։ Անտառն եր խշշում միայն՝ խուլ ու համատարած խշշոցով։ Յեվ այդ խշշոցի մեջ լսվում եյին յերբեմն քնած թռչունների հանկարծական ձիչ, չոր ճյուղերի կոտրվելու ձայն և մայիսյան բոռի բզզոցը։ Ծովանը ցերեկ թե գիշեր անտառում շատ եր յեղած և այդպիսի ձայներ շատ եր լսած, բայց այդ բոլորն այժմ թվում եյին թշնամի մարդկանց ձայներ։ Նա անհանգստանում եր ավելի հորթի համար և վախենում, թե չինի հանկարծ տերերը գան և յետ տանեն իրեն։

Փոքը ինչ արածելով՝ նա շարունակեց ճանապարհը անտառի միջով։ Յերկու որ առաջ մի բացատում շատ համեղ խոտ եր կերել։ Շտապում եր այստեղ։

Նրա շուրջն ու գլխի վերել անտառը խշում եր շարունակ։ Ծառերի արանքում տարածված եր մի քաղցր բուրմունք—դա լորիներն ու թեղիներն եյին արձակում իրենց հոտը։ Ճանապարհին գուգահեռ ներքե եր վաղում լեռնային փտակը՝ անտառի խորքը աղմկելով։ Զրի ձայնի վրա Ծովանը հաճախ կանգնում եր և յերկյուղով նայում դեպի ձորակը։ Թշոց եր ու ակնակիր խավար։ Վոչինչ չեր յերեռում։ Հավաստիանալով, վոր դա ջուրն ե շառաչում և թշնամի չկա—նա փոքր ինչ հանգստացած՝ շարունակում եր ճանապարհը, յերբեմն-յերբեմն շյուղեր ու տերեներ պոկելով։

Վերջապես հասավ ուզած բացատը և կանգ առավ։

Հորթը դարձյալ յետ եր ընկել. սպասեց մինչև մոտեցավ, լիզեց մի քանի անգամ գլուխը, յերեսը և ապա սկսեց արածել։ Խոտն այնքան համեղ եր, վոր քանի արածում, ախորժակն այնքան բացվում եր և այնքան ավելի քաղցած եր զգում իրեն... Նա արածում եր, իսկ հորթը հոգնածությունից նստել ու նայում եր մորը։ Նա և մըսում եր և վախենում մութից, անտառի ձայներից։ Ծովանը նույնպես վախենում եր, բայց նրա վախն ելի հորթի համար եր և այդ պատճառով արածում եր հորթի շուրջը։ Արածում եր և շուշուտ նայում նրան, այնպես, ինչպես նոր ծնած ժամանակը, յերբ ամեն մի բռպե վախենում եր, թե ահա հորթը կփախցնեն իրենից...

Այսպես արածեց բավական ժամանակ, արածեց ագահաբար ու փնչոցով, և դեռ յերկար, շատ յերկար պիտի արածեր, յեթե հոգնածությունը չհաղթեր նրան։ Տեսնելով վոտները ցավում են, նստեց հորթի մոտ և սկսեց արոճ անել։

Դեռ մութն եր։ Անտառը շարունակում եր խշալ... Մերթ այդ խշոցը դառնում եր աղմկալից, ժխորային, մերթ փոխվում եր խաղաղ սլուցի։ Թվում եր ահաբեկված, հուզված անտառը, հանգստանում եր մի բռպե և ունկնդրում ինչ վոր մեկի հեռավոր, խուլ քայլերին։

Ծովանը վորոճում եր և հաճախ, ականջները խլած, նայում չորս դին։

Այսպես մնաց մինչև լուսաբաց։

4.

Առավոտը ցուրտ եր, խոնավ, գիշերը կարծես անձը եր յեկել. խոտերը, թիկերը, ծառերը թաց եյին։ Ծառերի արանքով ա-

բեկի շողերն ընկել եյին կանաչների վրա և ցողի կաթիներն ամեն տեղ փայլում եյին, պսպղում։ Ողի մեջ կար մի դուրեկան սառնություն։ Յերբ Ծովանը վորոճում եր—նրա շնչառությունը քթածակերից դուրս եր գալիս գոլորշու պես։ Թե նրա և թե հորթի մեջ-քից բարակ գոլորշի եր բարձրանում։ Այդ սառնությունը դուր եր գալիս Ծովանին, բայց հորթը մըսում եր. նրա մազերը փշաքաղվել եյին։ Մոր կողքին կանգնած՝ աշխատում եր կպչել նրան կամ մտնել նրա փորի տակ։ Իսկ մայրը կարծելով հորթը սոված ե, բոլոր ժամանակ կուրծն եր դեմ անում նրան։ Հորթը, սակայն, մոռութը մի քիչ մոտեցնում եր մոր պտուկներին և նորից կանգնում անշարժ։ Արևի բարձրանալուն հետ նա ել կամաց-կամաց զվարթացավ, և այն ժամանակ, յերբ Ծովանն սկսեց արածել, նա ել ամեն մի քայլը դողդողալով փոխելով։ Հետեւում եր նրան։ Յերբ վոտները թրջում եյին՝ վախեցած կանգ եր առնում, մի կամ մյուս վոտը բարձրացնելով...

Արածելով՝ կով ու հորթ բացատից նորից անտառ մտան և սկսեցին ծառերի արանքով առաջանալ։ Ցողը կաթում եր ծառերից։ Ծովանը ծարավ եր զգում, ու արահետն ընկած գնում եր ջուր գտնելու հույսով։ Անտառի այդ մասը նրան ծանոթ չեր, բայց կարծում եր, վոր այդ ուղին գնում ե դեպի ջուրը։ Փորձով գիտեր, վոր ամեն մի ճանապարհ վերջանում ե ջրի մոտ։ Ու հանգիստ, պոչը մեջքին խփելով ընթանում եր առաջ, և հորթը հետեւում եր նրան, յերբեմն սահելով ու սայթաքելով։

Ճանապարհը յերկա՛ր եր. գնում եր շարունակ ծառերի տակով և աննկատելի ձգվում դեպի վեր, միշտ դեպի վեր։

Կետ ճանապարհին սկսեց անձրեւել։ Սկզբում հատ-հատ կաթեկթեց տերեների վրա, հետո ամբողջ անտառը շրխկաց հանկարծ։ Ու ջուրն սկսեց թափվել տերեներից... Ծովանը կանգնեց մի փոքր, ապա ճամփան շարունակեց անձրեւի տակ։ Հետզհետե անձրեւ բարակեց, և ճանապարհը վերջացավ մի փոքրիկ ձորակում, աղբյուրի մոտ։ Զուրը հոսում եր ավազների վրայով մի քանի քայլ և այնուահետեւ կորչում կանաչ ճահիճների մեջ։

Հասնելուն պես Ծովանը ընկավ աղբյուրի վրա ու սկսեց խմել, ավելի շուտ՝ ծծել։ Այսքան խմեց՝ փորը ուռափ։ Ապա նստեց և սկսեց հորթին լիզ տալ...

5.

Մնաց Ծովանն այդտեղ յերկու որ։ Շատ գոհ եր. տեղը լավ եր—և ջուր կար և խոտ, ու վոչ տեր կար, վոչ թշնամի։ Վոչ վոք

չեր անհանգստացնում: Կուրծը, պառկները այլիս չեյին ցավում: Ընդհակառակը, նրանք հիմա շատ լավ եյին, յերբ հորթն եր ծծում միայն: Իսկ հորթը նրան ծծում եր որը մի քանի անգամ և մնացած բաներում որինակում եր մորը: Նրա նման վոտներն զգուշությամբ կոխում եր ջուրը, պոչը փոքր ինչ բարձրացնում և խմում ակից կամ գլուխը կախ արածում կանաչը: Յերեկոները, յերբ ցըրտում եր՝ մտնում եր մոր փորի տակ կամ նստում նրա կրծքին կպած, իսկ մայրը նրան տաքացնելու համար գլուխն ու վիզը մեկնում և նրա մեջքի վրայով: Այսպես անցավ յերկու որ: Յերրորդ որը, սակայն, յերբ արել նոր ծածկվել եր անտառի այն կողմը, պատահեց անսպասելի մի բան:

Սկզբում հեռվից, ապա հետզիտե մոտից Ծովանը լսեց ինչ-վոր խշխոց ծառերի մեջ: Խշխոցը լսվում եր յերկար, բայց խըշխացնողն ինքը չեր յերեւում: Յեվնա բոլոր ժամանակ ականջները խլած նայում եր այդ խշխոցի կողմը: Գազա՞ն ե, թշնամի... Նա մոտեցավ հորթին և պատրաստ կանգնեց...

Յերեվաց, վերջապես, մի մարդ:

Կովը վախից յետ-յետ գնաց: Թվաց նրան, թե տերերից մեկն ե... Բայց վոչ, տերերից չե: Սա միըուքավոր յե, կարճահասակ ու սկ փափախով: Այնուամենայնիվ թշնամի յե, պետք ե զգույշ լինել: Յեվ գլուխը բարձր բռնած, Ծովանը անհանգիստ նայում եր այդ անծանոթ մարդուն, վոր ինչ-վոր փայտ եր քաշում թոկով: Յերբ քիչ առաջ յեկավ՝ նա կանգնեց և Ծովանին նայեց: Նայեց նրան, նայեց հորթին, նայեց, նայեց և նստեց ու սկսեց շվագնել: Հետո ձեռը մեկնելով կանչեց «բիժի, բիժի, բիժի»... Ծովանն, ի հարկե, մոտ չգնաց. նա չեր հավատում, վոր անծանոթն իր ձեռին աղ ունենա...»

Բավական նստեց անծանոթն այսպես, և յերբ մութն ընկավ, փայտը թողեց և Ծովանին ու հորթին առաջ արավ ու քշեց դեպի վեր: Ծովանը չեր ուզում գնալ, բայց մարդը մի յերկու անգամ խփեց նրան ու բարկացավ խեղդված ձայնով.

— Դե՛, շան վորդու անտեր...

Ճանապարհը դարձյալ գնում եր անտառի միջով, և Ծովանը չեր հասկանում, թե ուր ե քշում անծանոթն իրեն այս անծանոթ ճանապարհներով: Նա քշում և խոսում եր առանց գոռալու, վոչ այնպես, ինչպես իր տերերը կամ ինչպես ուրիշ թշնամիներ... Մթան մեջ յերկար գնում եյին և նա ասում եր միայն. «Հե՛, շան վորդու անտեր»...

Յերը անտառից դուրս յեկան, հեռվից լսվեց շների հաչոց:

Ծովանը հասկացավ, վոր նոր գյուղ են մտնում — և՝ շների հաչոցն եր ուրիշ և ճամփեն...



Յեվ, իսկապես, նոր գյուղ եր: Տները մթան մեջ չեյին յերեւում, բայց ուրիշ հոտեր եյին գալիս և ճամփի վրա բոստաններ կային: Անծանոթը հենց գյուղի ծայրին տարավ նրան մի մութ գոմ, վորից հավերի և յավշանի հոտ եր գալիս: Յերբ անծանոթը նրան գոմն արավ ու գնաց, Ծովանը մտածեց, վոր թշնամու ձեռք ե լուկել. բայց միթե արգելված արոտ ե արածել... Նա մտածմունքի մեջ եր, յերբ, քիչ հետո, ներս մտավ ելի անծանոթը՝ նրա հետ մի կին ճրագը ձեռին:

— Ե՞ս ա՞, ասավ կինը ճրագը Ծովանին մոտեցնելով, — վորտե՞ղ գտար...

Անծանոթը ինչ-վոր բան ասավ, վոր Ծովանը լավ չլսեց, հետո յերկուսով՝ մարդ ու կին, կապեցին իրեն ու հորթին և միասին դուրս գնացին:

Գոմը նորից մթնեց: Դարձյալ հավերի ու յավշանի հոտ եր

գալիս։ Հոգնածությունից Ծովանը շուտով քննեց, և յերբ զարթնեց՝ լույս եր արդեն։ Քիչ հետո անծանոթն ու կինը նորից մտան զոմ կինը մի կովկիթ ձեռին, մարդը մի գիրկ խոտ։ Հորթին ծծեցըին, վոտներին կապեցեն և սկսեցին կթել։ Մարդը քորում եր Ծովանի մեջքը, իսկ կինը կթում եր և հետո ել գովում։

— Լավ պտուկներ ունի... Երանի՛ մերն ըլի...

Այս խոսքերը Ծովանին շատ դուր յեկան և նա հասկացավ, վոր թշնամու ձեռ չի ընկել։

Այդ միջոցին հանկարծ դուռը բացվեց և ներս վաղեցին յերկու յերեխա. յերկումն ել փոքրիկ, բորբիկ ու փորներն ուռած։ Այն մեկը մի կտոր հաց կոծելով, կանգնեցին ու նայեցին Ծովանին։

— Եյ, բեխեք, մարդու բան չասեք, հա՛...թե ապին կով ա գտել, — ասավ կինը կթելով։ Նրանից ավելուկի հոտ եր գալիս, Ծովանը հոտնոտում եր և կաթը թողնում։

Յերբ կիթը վերջացավ, անծանոթը բերած խոտը դրեց Ծովանի առաջ, իսկ կինը նորից յերեխաներին՝ «Լսո՞ւմ եք, ասավ, մարդու բան չասեք, հա՛»։

Յեկ հետո կովկիթից կաթ խմեցը նրանց։

— Լավն ա՞, հարցըց։

— Հա՛, ասին յերեխաները գոհ։

Ծովանն ուրախացավ, վոր իր կաթը հավանեցին։

«Ուրեմն թշնամու ձեռ չի ընկել» — մտածեց կրկին։

Չորս որ մնաց անծանոթի տանը և չորս որն ել գոմից դուրս չտարան նրան, Ամեն որ գալիս եյին կանաչ խոտ տալիս, տակը սրբում, կթում ու գնում։ Իսկ յերեխաները, ծնողներից ծածուկ, մտնում եյին գոմը, հորթի մեջքին նստում, իրա՛ Ծովանի պտուկները քաշում, պոչը ձիգ տալիս ու փախչում։ Այդ պատճառով Ծովանն սկսեց յերեխաներին ատել... Չորրորդ որվա գիշերը անծանոթն անձրագ մտավ գոմը, արձակեց նրան ու հորթի հետ դուրս տարավ։

Մութն եր. վոչինչ չեր յերեկում։ — Ո՞ւր են տանում իրեն, մըտածում եր Ծովանը գիշերվա խավարին նայելով. և ամբողջ ճանապարհին այդ միտքը չեր անցնում նրա զլիսից։ Յերկու որ ու գիշեր ճանապարհ եյին գնում սարերով ու ձորերով։ Յերեկները անծանոթը թողնում եր անտառում, թփուտների մեջ արածելու, իսկ գիշերը քշում եր ինչ վոր վատ, անծանոթ ճանապարհներով։ Մեկ-մեկ հանդիպում եյին տավարի, բայց անծանոթը չեր թողնում խառնը վելու։ Մարդիկ ել քիչ եյին պատահում։ Մի անգամ միայն հանդիպեցին յերկու գյուղացու. նրանք հարցըին անծանոթին իրա Ծո-

վանի մասին. «Ո՞ւր յես տանում ես կովը»։ Անծանոթը պատասխանեց. «Ծախելու»։

Ծախելու... Ուրեմն իրեն ուրիշին են տալու, մտածեց Ծովանը։ Նա գիտեր՝ յերբ ծախում են — տալիս են ուրիշի...»

6.

Այդպես ել յեղավ։ Յերբ հասան մի մեծ գյուղ, անծանոթը Ծովանին ծախեց մի յերկար մարդու, նրանից ինչ վոր թղթեր առավ ու ել չերեաց։ Իսկ մարդը նույն որը առաջ արավ Ծովանին ու նորից քշեց գյուղից դուրս։ Ճանապարհը քարոտ եր ու յերա՛ր-յերկար։ Վորովինետե հորթը չեր կարողանում քայլել, մարդը տեղտեղ կանգնեցնում եր նրան ու զլուխը նրա յետեկի ու առաջի վոտների արանքը կոխելով դնում եր ուսերին։ Ծովանը վախեցած՝ շուտ յետ եր դառնում և մզզում, թե չինի հորթին մի բան պատահի։ Բայց մարդը ամեն անգամ հանգստացնում եր նրան։

— «Գնա՛, անխելք, գնա, չեմ սպանում»... Իսկ յերբ հորթը մոր ձայնի վրա խլրտում եր. «Խելո՛ք, սարսաղ, խելո՛ք... Գլխիդ պատիվը հասկացիր»...

Նոր տիրոջ գյուղը փոքր եր, տները ցածր եյին, կտուրներին ավել բուսած. և բոլոր աների առաջ կիտված եր տներից դուրս թափված աղըը, յերեխաները խաղում եյին նրանց մեջ, իսկ չները նրանց վրա նստած՝ մռառում եյին։ Այս բոլորը Ծովանին հիշեցրեց իրենց սարի գոմերը, ուր այնքան լավ խոտ կար և լավ ջուր։ Նոր տիրոջ տունը սակայն բոլորից մեծ եր, բոլորից բարձր։ Ծովանին կապեցին այդ տան առաջ մի ծառից, և շուտով ամեն կողմից մարդիկ յեկան նրան տեսնելու։ Մուեցան՝ նայեցին քիչ, հեռացան ու ելի նայեցին. կրկին մոտեցան, ձեռք տվին կրծին, պտուկներին, ապա գովեցին իր հասակը, վոտները, կուրծը, պտուկները։

— Լավն ե, լավը. շնորհավոր ըլի, — ասում եյին նրանք։ Հետո նայեցին հորթին։

Բոլոր խոսքերից ու շարժումներից Ծովանն զգում եր, վոր թշնամի մարդկանց ձեռ չի ընկել, բայց նրա սրտում զեռ կասկածներ կային. բոլորին նայում եր վախով և չեր իմանում ո՛վ ե իսկապես իր բարեկամը։ Սակայն ո՛վ փայփայում եր հորթին, նըրան ել նայում եր համականքով։

— Կովը լավն ե, բայց հորթը հիվանդի պես ե, ասավ մեկը։

Մարդիկ կրկին մոտեցան հորթին, նայեցին և ասին. «Քեզարած ե»։

Ծովանն ականջները խլած, ուշադիր նայում եր մարդկանց,

և նրանց հոգատար վերաբերմունքը տեսնելով՝ մտածում եր, վոր իրեն այստեղ յերկի չեն նեղացնի և հանգիստ կթողնեն:

Բայց հենց առաջին գիշերը նա անհանգիստ անցրեց:

Թեև դուրսը տաք եր, բայց նրան կապեցին զոմում, ուր կար մի թառ հավ, մի քանի վոչխար և մի այծ, վոր Ծովանին տեսնելուն պես փախավ գոմի անկյունը:

Նոր տերը Ծովանին կապեց մասուրին, իսկ հորթը վոչխարների մոտ՝ մի սյունից:

Մթնում եր և մութը կամաց-կամաց լցվում եր գոմը:

Կապելուց հետո Ծովանը մի փոքր կանգնեց, շուրջը նայեց, նայեց վոչխարներին, այծին, հավերին և ապա փնչոցով նստեց ու գլուխը դրեց փորին, Բայց քնել չկարողացավ. աչքերի առջեկից շարունակ անցնում եյին ճանապարհներ, թփեր, շներ, վոր պոչները ցցած շարունակ վազում եյին, մարդիկ, մարդիկ և յերեխաներ, յերեխաներ, վոր քար եյին քցում իրեն կամ պոչը ձիգ եյին տալիս ու փախչում... իսկ հետո, յերբ բուն եկել եր արդեն—մի ուժեղ տնքոց և դրա հետ ինչ-վոր ձայներ զարթեցրին նրան:

Հորթն եր: Նա տնքում եր խոր ու յերկար մի տնքոցով. վրան ասես մի ծանր բեռ եր ընկել:

— Ը՞ն, ը՞ն,—լսվում եր նրա ձայնը գոմի մի ծայրից:

Իսկ այծը շարունակ մկնում եր, մկնում, չգիտես ինչո՛ւ և ինչի՛ համար, Մկնում եր այնպես, վոր կարծես կանչում եր մեկն. «Մակկա՛ր, Մակկա՛ր»...

Վոչխարները նույնպես անհանգիստ եյին. Նրանք փոնդտում, փնչացնում եյին շուտ-շուտ և ինչ-վոր բանից խրտնած՝ իրար գլխով դիպչում: Հավերը թառժած՝ յեղած՝ կչկչում եյին՝ դարձյալ ինչ վոր բանից վախեցած, իսկ աքաղաղը կրկնում եր խրոխտ. «կը՝ կը՝ կը՝ կը», վոր թվում եր սիրտ և տալիս հավերին—«Մի՛ փախեք»...

Ծովանը վոտքի յելալ և մզզաց:

Հորթը նրան չպատասխանեց:

Նա շարունակում եր տնքալ:

Ի՞նչ ե պատահել, ի՞նչու ե հորթը տնքում—Ծովանը չեր հասկանում: Ուզում եր մոտենալ, բայց կապը չեր թողնում, մթան մեջ ել վոչինչ չեր յերեսում:

— Ը՞ն, ը՞ն,—լսվում եր դարձյալ հորթի ձայնը գոմի մի ծայրից:

Ծովանը նորից մի քանի անգամ մզզաց, և հորթը դարձյալ չպատասխանեց նրան:

Յեվ այսպես շարունակվեց յերկար: Գիշերվա կիսին հորթի

տնքոցն ավելացավ և այծն ավելի անհանգիստ դարձավ:

— Մակկա՛ր, Մակկա՛ր,—կրկնում եր նա ահաբեկված և արագ-արագ քայլում գոմում:

Ծովանը կանգնած ականջ եր գնում հորթի ձայնին և սպասում, վոր հիմա տերն ուր-վոր ե ներս կմտնի և ամեն բան կարգի կընկնի: Բայց տերը չկար ու չկար: Աքաղաղը կանչեց—Ծովանը համոզված եր, վոր հիմա նա, անկասկած, կդա—դարձյալ չեկավ:

Ու յերկար, յերկար, մինչև լուսաբաց բոլորն անհանգիստ եյին գոմում: Իսկ լուսաբացին հորթի տնքոցը նվազեց ու կամաց-կամաց կտրվեց, և շուտով, լույսը բացվելուն պես, Ծովանը տեսավ, վոր հորթը պառկել ե մի կողքի ու վոտները մեկնել: Վոչխարները մոտիկ կանգնած պիշտից նայում եյին նրան, իսկ այծը միրուքը թափ տալով՝ մկնում եր ելի—«Մակկա՛ր, Մակկա՛ր»...

Ծովանն իսկույն հասկացավ, վոր դժբախտություն ե պատահել, և այս անգամ արդեն, վորքան ուժ ուներ, ձիգ տվեց կապը՝ կտրեց ու մզզալով մոտեցավ հորթին: Մոտեցավ, դնչով հրեց նրան ու մզզաց:

Հորթը չշարժվեց:

Նա սկսեց լիզել նրա գլուխը, աչքերը:

Հորթը դարձյալ անշարժ մնաց:

Այդ ժամանակ Ծովանը գունչը մոտեցրեց հորթի դնչին և բարձր բառանչեց, ու քիչ հետո, նրա մեծ, սև աչքերը լցվեցին տրցունքով:

Հորթը մեռել եր:

Յերբ լույսը բոլորովին բացվեց տերն ու կինը յեկան: Հորթին տեսնելով՝ յերկուսն ել հայրոյեցին ում-վոր:


— Բա հիմի վոնց պիտի կթենք, ասավ կինը:

— Կփորձենք:

Վշտից Ծովանը յերկու ժում թույլ չտվեց իրեն կթելու, բայց հետեւյալ որը, տեսնելով՝ կուրծն ուռչում ե—թողեց: Սակայն այդ որվանից սկսած նա թշնամացավ յերեխաների և վոչխարների հետ: Նրան թվում եր, վոր դրանք եյին—անծանոթի յերեխաները և նոր տիրոջ վոչխարները—վոր չարչարեցին հորթին: Ուստի և վորտեղ յերեխա կամ վոչխար եր տեսնում վրա եր պրծնում հարու տալու...

7.

Նոր տերերը Ծովանի անունը դրին Ծաղիկ՝ պոչի սպիտակի պատճառով: Մկրտչում այդ անունը շատ խորթ եր թվում նրան,



բայց հետզհետե ընտելացավ, ինչպես ուրիշ շատ բաների: Որեքն անցնում եյին բոլորն իրար նման: Առավոտը տանում եյին հանդը, յերեկոյան բերում կիթ: Նոր տերը մի հոտաղ ուներ՝ անունը Մոսո. սա առաջ իրեն տանում եր վոչխարների և այծի հետ, բայց մի քանի որից հետո դրանց ծախեցին և այնուհետեւ տանում եր ուրիշ կովերի հետ: Նախրի մեջ շատ կով կար—բոլորն ել հպարտ, ամբարտավան ու անհաշտ: Ծովանին տեսնելուն պես մեկը կամ մյուսը վրա յեր պրծնում նրան հարու տալու կամ վորեե մի յերինջ, հաճույքի համար, նրան առաջ եր գնում ու քշում, հետո կանգնում ու հողը քանդում պողերով: Այդ պատճառով Ծովանը միշտ նախրի վերջումն եր գնում: Ամբողջ նախրի մեջ կար մեկը միայն, վորին Ծովանը համակրում եր սրտանց—դա մի պատավ կով եր—ծանրաշարժ ու հանդարտաբարո բնավորության տեր, վոր յերբեք չեր մտանակցի ջահեների չարության: Նա Ծովանին իր հովանավորության սակ առավ: յերբ մեկը մոտենում եր Ծովանին խփելու՝ նա բարկացած վրա յեր գնում և սաստում համարձակին: Այս բոլորից վոգի առած՝ Ծովանը մի որ, ճաշվա շոգին մոտեցավ պառավ Զեյրանին (այսպես եր պառավ կովի անունը) և վիզը երկարեց նրա առաջ, Պառավ Զեյրանը հասկացավ նրա միտքը և լիզեց նրան: Այդ որդանից նրանք բարեկամացան և այնուհետեւ անբաժան եյին:

Մի առժամանակ ամեն ինչ լավ եր գնում: Ծովանին դուր չեր գալիս միայն մի բան, վոր Մոսոն հանդում կթում եր իրեն: Դուր չեր գալիս այն պատճառով, վոր յերեկո ու առավոտ տանը կթում եյին քիչ եր—ճաշին ել դա եր կթում: Գլխարկի յերեսը փոս զցելով՝ կթում եր նրա մեջ, խմում և գլխարկը չորացնում արկի տակ: Տանտիրուհին, սակայն, հասկանում եր ամեն բան, ու ամեն յերեկո կթելիս ասում եր. «Ես կովը կաթը քաղել ա, ինչ ա. առավոտը ավելի շատ ա տալի, քանց իրիկունը: Զարմանք բան ա», զարմանում եր նա:

Մի որ ել, յերբ նա խոսում եր այսպես, տերը կանչեց Մոսոնին.—Այ գյաղա...

— Համմե, լսկեց Մոսոյի ձայնը գոմից, և, քիչ հետո, Մոսոն յեկավ ու կանգնեց տիրոջ առաջ:

— Ես կովին ի՞նչ ա պատահել:

— Ի՞նչ պըտի պատահի վոր...

— Լավ արածում ա:

— Խի չի...

— Բա ինչո՞ւ կաթ չի տալիս:

Մոսոն ուսերը վեր քաշեց.—Յես ի՞նչ գիտեմ:

Տերը մատը թափ տվեց նրա վրա:

— Հը՛, քնթիցդ կհանեմ՝ մին ել կթել ես: Հասկանը՝ մին ել չեմ—չիմանամ...

Այդ խոսքերը Ծովանին շուտ դուր յեկան. ուրեմն Մոսոն ել չի կթի իրեն, մտածում եր նա: Բայց հազիվ տերն ու կինը տուն մտան, Մոսոն մոտեցավ իրեն՝ Ծովանին և «քու տիրոջ են» ասավ ու քացով խփեց փորին, հետո ճիպոտվ վոսներին ու մեջքին:

— Կաթն ու մածունը լափում են մենակ, ինձ ցամաք հաց են տալի...

Ծովանը տեսնում եր այդ, տեսնում եր, վոր Մոսոն, իսկապես, ամեն որ միայն հաց ե ուտում, բայց թե ինչո՞ւ դրա համար իրեն եր ծեծում—չեր հասկանում...

Այնուամենայնիվ, այդ որվանից Մոսոն չկթեց իրեն, բայց ամեն որ հայհոյում եր, քար եր շպրտում յետ տալու կամ քշելու ժամանակ, և Ծովանը դարձյալ չեր հասկանում, թե ինչու նա այդպես ե վարվում իր հետ: Յեկ առհասարակ այս նոր տիրոջ տանը անհասկանալի բաներ շատ կային:—Որինակ, տիրոջ կինը միշտ հարու յեր տալիս իրա յերեխաներին, և յերեխաները բարձր, յերկա՞ր բղավում եյին մորը կորցրած հորթերի պես... Իսկ յեթե այդ ժամանակ վրա յեր համանում տերը—նա յել եր հարու տալիս նրանց... Ծովանը, վոր հորթի մենակուց հետո ատում եր յերեխաներին, չեր սիրում վոր նրանք բղավում եյին կամ, յերկար բղավելուց հետո, գալիս եյին գոմի մասուրում քնում: Նրանց ներկայությունը միշտ անհանգստացնում եր Ծովանին: Բայց ավելի անհանգստանում եր, յերբ յերեկոյան քնելու ժամանակ, ճրագով գալիս եյին յերեխաներին գտնում և նորից հարու տալով բղավեցնում: Գոմը լցվում եր աղմուկով... Յերբեմն ել տանտիրուհին եր գալի՛ գոմում նստում ու աչքերը արորելով՝ ճայներ հանում: Ճիշտ ե, նա յերեխաների պես չեր բղավում, բայց մի այնպիսի ճայն եր հանում, վորից Ծովանը քնել չեր կարողանում: Այդպես շարունակվում եր յերկար, մինչև կոր տերը ճրագով գալիս եր նրան տանելու: Կինը չեր ուզում գնալ. «Գնա, ասում եր, գալիս չեմ»:

— Յեկ ասում եմ՝ վեր կաց:

Կինը վեր չեր կենում: «Տե՛ս, ելի կջարգեմ» ասում եր տերը, ձեռները շարժելով: Այդ ժամանակ կինը վեր եր կենում և յերկուսը միասին գուրս եյին գնում:

Զնայած այդ բոլորին, Ծովանն իրեն լավ եր զգում: Նոր տերը այնուամենայնիվ առաջվա տերերի պես չեյին ծեծում, սոված չեյին պահում: Ընդհակառակը—լավ նայում եյին, կերակրում

և ուրախանում, յերբ ինքը հանդից գալիս եր տուն։ Իսկ յերեխաները միշտ առաջը վազելով՝ կանչում ելին, —արի՛, Ծաղիկ ջան, արի...

Այսպես անցավ մի տարի, Ծովանը նոր տիրոջ տանը մի հորթ ծնեց, մեծացրեց, վորից հետո նրան մի դժբախտություն պատահեց։

8.

Գարնան պայծառ որ եր։ Նախիրն արածում եր գաշտի մեջ ցրված։ Յերկու տավարած մեկնվել ելին խոտերի վրա և ծույլ-ծույլ զրուցում ելին։ Մեկը մեջքին պառկած նայում եր կապուտ, խոր յերկնքին, մյուսը փորի վրա ընկած՝ վոտները խաղացնում եր ողի մեջ։ Դուրեկան որ եր։ Յերինջները խնդմնդում ելին հաճույքից։ Մի քանիսը նրանցից թփերի արանքը մտած՝ քաղում ելին նրանց միջի խոտերը, իսկ հասակավոր կովերն իրենց կրծերը չվասելու համար, փշոտ թփերից հեռու, արածում ելին բաց տեղերում։ Ծովանը արածում եր՝ պառավ Զեյրանի կողքին և յերբեմն-յերբեմն պոչը գավակին ու կողերին խփելով՝ բարձրացնում եր ծանր գլուխը և իր խոր, վճիռ աչքերով նայում եր հեռու-հեռու—մշուշապատ հորիզոններին, ապա, աչքերը փակելով, գունչը թեթեակի բարձրացնում եր դեպի արեւ, կարծես նրան իր սրտի գոհունակությունը հայտնելու շերմության և առատ կանաչի համար։ Հետո, մի քանի բոպե անց, նորից շարունակում եր արոտը նախկին յեռանդով։

Արածելով՝ նախիրն աննկատելի մոտենում եր գետակին, վոր խշշում եր մի քանի քայլի վրա։ Զրի ձայնը լսելով կովերն ընդհատեցին արոտը և շտապեցին ջուր խմելու։ Մի քանի բոպեյից ամբողջ նախիրն արդեն գետակի մոտ եր։

Զուրը խմելուց հետո, գետի այն կողմը կանաչ նկատելով՝ կովերն անցան մյուս ափը։ Առատ, անարատ կանաչ եր։ Ծովանը հոտից զգաց, վոր տավարի վոտ չի դիպել։ Ուրախացած վրա պըրծան և սկսեցին արածել աշխույժով։


Մի քանի բոպե անց՝ հանկարծ մոտիկ աղմուկ բարձրացավ։ Կովերը խլցեցին։ Յերեացին մի խումբ անձանոթ տղաներ շներն յետեց։ Ծովանին թվաց, վոր նրանք վազում են թոշունների յետեց։ Գալիս ելին աղմուկով ու փայտեր շարժելով։ Յերբ մոտեցան՝ շները հաջոցով առաջ անցան։ Յերինջները խրտնեցին ու փախս առան, մի տարեկան մողինները մոտեցան մայրերին, իսկ մայրերը զլուխները դիք բռնած՝ կանգ առան... Աղմուկի վրա վազեցին և կանաչների վրա պառկած տավարածները ու մոտեցան անձանոթ-

ներին։ Ծովանը կայում եր թե ի՞նչ ե լինելու։

Ան ձանոթները ուզում ելին իրենց քշել-տանել, բայց տավարածները չելին թողնում։

— Աստված վկա՝ նոր են ընկել, ասում ելին նրանք, — մենք տեսնել չենք...

Բայց անձանոթները չելին ուզում լսել և դարձյալ ուզում ելին իրենց քշել։ Տավարածները դարձյալ չթողին։ Այսպես մի քանի անգամ նրանք փորձեցին քշել իրենց, տավարածները չթողին։ Հետո սկսեցին բոլորը միասին բարձր խսել, գոռալ, ձեռք շարժել իրար վրա, ապա հետզհետե մոտենալով՝ սկսեցին խփել միմյանց փայտերով, քարերով։ Խփում ելին, ճշում ու բղավում։ Մոտն նույնպես կովում եր։ Ծովանն ավելի հետեւում եր նրան, քան մյուսներին. նա ել բղավում եր և ձեռի մահակը վրա բերում արան-նրան։



Մի առժամանակ նրա դրությունը լավ եր. կանգնած կովում եր. բայց, քիչ հետո, քարերով փախցրին նրան... Բոլոր ժամանակ Ծովանը — նրա հետ և ամբողջ նախիրը — խլած հետևում եր այդ կովին և զարմանում, թե ինչո՞ւ են կովում... Տավարածների խոսքերից Ծովանը հասկացավ, վոր իրենք անցել են մյուս գյուղի սահմանը և կերել նրանց խոտը։ Դա առաջին անգամ եր պատա-

հում Ծովանին։ Դեռ նախկին տիրոջ մոտ նրան թվում եր թե աշխարհը վերջանում ե անտառի գլխին և այդ աշխարհում մենակ իրենց գյուղն ե, բայց հետո տեսավ ուրիշ գյուղեր ել, բայց թե, ի՞նչ բան եր սահմանը—չեր լսել։ Հետո, նրան զարմացնում եր այն, վոր մարդիկ կովում են խոտի համար։ Զե՞ վոր խոտը բունում ե իրենց՝ կովերի համար, իրենք ել կերել են... ել ինչ կարիք կա կովելու... Զարմանալի յեն այս մարդիկ, մտածում եր նա,—միշտ կովում են... Կովում են իրենց տեղն ել, մեր տեղն ել. կովում են և մեզ հետ և իրար հետ... Արածում ես՝ քարով տալիս են... Ե՞ս, մարդկանց գժվար ե հասկանալ...

Մտածում եր Ծովանը և նայում կովող տղաներին։ Իրար կը պած՝ միմյանց հարու եյին տալիս նրանք և բղավում, գոռում... Կովեցին այնքան, մինչև վոր տավարածները թողին փախան, իսկ անձանոթ տղաները քշեցին նախիրը դեպի մոտիկ գյուղը։

Անձանոթ տղաները և քշում եյին, և ծեծում։ Ծովանը, վոր բոլորից յետ եր, յերկու անգամ իր մեջքին զգաց փայտի հարվածներ։ Հետո մի հարված ել իջավ կողքին, այնտեղ, ուր մի անգամ ին տերերի մոտ խփել եյին թոկով։ Այդ հարվածից նրա աչքերը մթնեցին—այնքան սաստիկ եր ցավը... Այդ պատճառով ել չիմացավ, չզգաց, թե ինչպես անցավ յերկար ճանապարհը ու մեկ ել իրեն տեսավ մի գոմում, իրենց նախրի հետ։ Գոմը նեղ եր, նստելու տեղ չկար. բոլորը կանգնել եյին կողք-կողքի։ Այդ քիչ եր—մի հիմար կով ել շուտ-շուտ հարու եր տալիս սրան-նրան։ Բոլորը՝ թե՛ կովերը, թե՛ յերինջները տնքտնքում եյին։ Ամենից վատ, սակայն, ցավում եր կողը։ Ո՛, ինչպես եր ցավում. քիչ եր մնում պոկա. ցավում եր ձիշտ այնպես, ինչպես մի անգամ շունը բռնեց իր վոտը. կարծես շունը կծում եր ելի...։

Յերկու որ նրանք մնացին գոմում, և յերկու որ շարունակ Ծովանի կողը ցավում եր։ Յերկու որ շարունակ մարդիկ եյին գալիս ու գոմի գուանը հավաքվում, խոսում. թվում եր փակ դուռը պիտի բանան, բայց թողնում եյին գնում։ Մի յերկու անգամ ել Ծովանը լսեց տիրոջ ձայնը, բայց նա ներս չմտավ։ Նա յեկել եր իրեն տանելու և ասում եր, վոր հորթը սոված ե։ Նրա հետ յեկել եյին մյուս կովերի տերերը, նրանք ել խնդրում եյին իրենց կովերը, բայց անձանոթները չեյին տալիս։ Մեր արտերը կերել են, ասում եյին, —վսասը տվեք, տարեք...

Թե տիրոջ խոսքերը հորթի մասին, թե «տուն անողների» պատասխանը՝ արտերը ուտելու մասին—զարմացրին Ծովանին։ Վոչ տիրոջ ասածն եր ձիշտ, վոչ «տուն անողների»։ Վոչ ինքը հորթ

ուներ տանը և վոչ ել նախիրն եր արտ արածել. նա քանի երրորդ անդամն եր տեսնում, վոր մարդիկ ավելի չեղածի մասին են խոսում, քան յեղածի։ Յեվ զարմանում եր։

Այդ յերկու որվա մեջ Ծովանի կուրծը ուռել եր անկիթ մնալուց և, կուրծը մի կողմից, կողի ցավը մյուս կողմից—սաստիկ անհանգստացնում եյին նրան։ Վերջապես, յերբ յերկրորդ որվա յերեկոյան մյուս կովերի հետ նրան ել բաց թողին—Ծովանը իրեն շատ վատ եր զգում։

Մի կերպ հասավ տուն և նույն գիշերը մեռած հորթ ծնեց։ Ել ինչիս ես պետք, —ասավ տերը առավոտը զոմ մանելով, մեռած հորթը տեսնելուց հետո.—թո՛ւ, և թքեց Ծովանի յերեսին։

Ծովանը գլուխը կախ արավ, նա չեր հասկանում, թե տերն ինչո՞ւ և հանդիմանում իրեն։

Խոսելով, թքոտելով տերը դուրս գնաց նորից և քիչ հետո կը կին յեկավ, նրա հետ կինը, յերեխաները, Մոսոն, հարևաններու ու, ինչպես նոր յեկած որը, շրջապատեցին իրեն, մեռած հորթին և սկսեցին խոսել ու ծնկներին խփել։

Մըանից հետո սա ել ինչի՞ և պետք, —ասում եր մեկը։ Հե՛չ, ուտող բերան ա մնալու միայն, —ասում եր տերը։

Ու յերկար խոսում եյին, և Ծովանն զգում եր, վոր այդ խոսակցությունը վերաբերում ե իրեն ու, իր ցավերը մոռացած՝ յերկյուղով մտածում եր, թե յերեկի տերն այլևս չի ուզում իրեն պահել այս գեպքից հետո։ «Բայց ինչո՞ւ, ինքն ինչո՞վ ե մեղափոր», մտածում եր նա և իր ախուր, թախծոտ աչքերով նայում շուրջը հավաքված մարդկանց։

Մի քանի տարվա փորձառությունն ու դիտողությունը Ծովանին բերել եյին այն յեղբակացության, վոր մարդկանց համար սիրելի բանը միայն այն ե, ինչ ստանում են ու ուտում, և սիրում են միայն նրան, ով մի բան տալիս ե իրենց։ Յեթե կաթ ես տալիս՝ սիրելիս ես, յեթե շատ ես տալիս՝ ավելի սիրելի յես։ Իսկ յեթե կաթ չունես, ցամքել ես —վա՛յ քեզ...»

Ո՛, տիսուր ե մարդկանց աշխարհը, մտածում եր Ծովանը և նորից նայում շուրջը հավաքված մարդկանց։

9.

Ծովանի նախազգացումն իրեն չեր խաբում։ Հորթատելուց հետո տիրոջ վերաբերմունքը միանգամայն փոխվեց դեպի ինքը։ Առաջվա պես նա այլևս ձեռները չեր քսում իր մեջքին, գլուխը չեր քորում, յերեկոները խոտ չեր զնում առաջը... Իսկ մի քանի որ

հետո սկսեց մարդիկ բերել և իրեն ցույց տալ նրանց...Մարդիկ շոշափում եյին իր մսերը, փորը, կուրծը, քաշում եյին պտուկները, փորձելու համար՝ կաթ գալի՞ս ե թե վոչ:

Մի որ ել, հանկարծ, տերը ծախեց նրան, և Ծովանը, կարճ ժամանակում, ձեռքից-ձեռք անցավ: Սկզբում նրան գնեց մի ծեր գյուղացի, վորի հարսը, կթելուց հետո, կաթը մեկ-մեկ քաշում եր գլխին: Մի որ ել խմում եր այդպես՝ դուռը ճռուց վախից կովկիթն ընկավ նրա ձեռից և կաթն ամբողջ թափեց գետին: Յերբ ներս մտնող տեղը հարցը եց պատճառը, հարսը պատասխանեց. «Կթեցի, կթեցի, վերջը քացով տվեց»: Այդ խոսքերի վրա տեղը բարկացավ և Ծովանին ծեծեց, թե ինչո՞ւ կաթը թափել եր:

Այստեղ ել նրան յերկար չպահեցին: Չպահեցին նրա համար, վորովհետև նրանք Ծովանին գնել եյին այն հաշվով, վոր նա ձմեռը հորթ պետք ե բերեր (այդպես եր հավատացրել նախկին տերը). բայց յերբ համոզվեցին, վոր իրենք խաբված են՝ Ծովանը հորթ չի բերելու, նրան տվին մի տերաերի և հավատացրին, վոր գարնանը— Զատկին պիտի ծնի: Տերտերի մոտ Ծովանն իրեն շատ լավ եր ըզգում. խոտը, դարմանը միշտ առատ եր. տերտերն ինքը ձեռի մեջ աղ եր տալիս նրան, շույտում եր, քորում, մի խոսքով շատ սիրում եր Ծովանին: Յեկ Ծովանը զոհ եր: Մի անգամ նույնիսկ, յերբ ինքը հիվանդացավ—նա իր գլխին գիր. կարդաց: կարդացածից Ծովանը թեև վոչինչ չեր ըմբռնում, բայց զգում եր, վոր իր համար լավ բան ե անում...

Սակայն այստեղ ել յերկար չմնաց: Շուտով, յերբ տերտերն ել, նախկին տիրոջ պես, համոզվեց, վոր կովը չի ծնելու—ծախեց չարգագարի: Յեկ Ծովանն ընկավ մի նախրի մեջ, վոր գյուղիտավարից մեծ եր և վորի մեջ յեզներն ավելի շատ եյին, քան կովերը, իսկ կովերը—բոլորն ել չկթվող, անհորթ կովեր եյին: Հետո կային շատ մողիներ ու արջառներ... Բոլորն ել տխուր, տխուր եյին. բոլորն ել խորթ եյին զգում իրենց և չեյին մոտենում միմյանց՝ խաղալու կամ լիզ տալու... Տիսուր եր... Մի քանի հասակավոր տափարած գիշերցերեկ արածեցնում եյին իրենց սարերում, մի որ ել դրանք նախիրն առաջ արին ու քշեցին չոր, փոշոտ և ուղիղ, յերկա՛ր ճանապարհով, վոր ձգվում-գնում եր դաշտերի, անտառների միջով: Յեկ ամբողջ ճանապարհը փոշի՛, փոշի եր... բարձրացած փոշին նստում եր բոլորի գլխին, մեջքին, մտնում եր աչքերն ու քթածակերը. Ուր եյին գնում, ուր եյին քշում իրենց—Ծովանը չեր իմանում. բայց վորովհետև նա գնում եր բոլորի վերջում՝ մի որ, վերջապես, լսեց, վոր իրենց տանում են քաղաք... ի՞նչ բան եր քաղաքը—Ծովանը

դարձյալ չեր հասկանում. արդյոք դա հանդ եր, սա՞ր, մի նոր գյուղ թե՞ գոմեր—չգիտեր... Ու գնո՞ւմ, գնում եյին անվերջ: Ցերեկը գնում եյին, գիշերը հանգստանում բաց յերկնքի տակ... Աշուն եր. արտերը հնձած, դաշտերը ամայի, ճանապարհը յերկա՛ր ու փոշոտ... Վոչ կանաչ կար, վոչ լավ ջուր, և տափարածները բոլոր ժամանակ քշում, քշում եյին իրենց՝ «Հո՛յ, հե՛յ, հո՛-հո՛»... Ու հոգնածությունից գլուխները կախ գցած, իրար հրճելով, իրար դիպչելով, միմյանց առաջներով՝ քայլում եյին նրանք փոշոտ, ուղիղ ճանապարհով, վոր չեր վերջանում, չեր վերջանում...


Յերեք որ ու գիշեր ճանապարհ կտրելուց հետո, վերջապես, հասան ծառերով շրջապատված ճերմակ տների: Նրանց արին մի ինչ-վոր տեղ, վոր ամեն կողմից փակված եր փայտերով: Տավարի հոտ եր գալիս. յերեւում եր, վոր մի քանի որ առաջ այդտեղ տափար ե յեղել: Հազիվ նրանք ուզում եյին հանգստանալ, մեկ ել տեսան հանկարծ, վոր մի ինչ-վոր սե, սե վիթխարի կենդանի ֆըշ-շոցով յեկավ վերեկից ու մոնչալով կանգնեց տների առաջ: Բոլոր կովերը, յեզները խրտնած՝ ուզեցին փախչել—փայտերը չթողին: Քիչ հետո յերեաց նրա նման մի ուրիշը, վոր գաղաղած վազում եր դեպի առաջ, իր հետ քաշ տալով բազմաթիվ տներ, վորոնց, լուսամուտներից նայում եյին մարդիկ, կանայք, յերեխաներ... Դրանից հետո յեկավ մի ուրիշը, և ելի՛, ելի՛...

Ծովանը վախեցած, զարմացած նայում եր զրանց, ականջները խլած.—աս ի՞նչ բաներ են, ինչո՞ւ համար են, և իրենց ինչո՞ւ յեն բերել այստեղ,—մտածում եր նա և, ինչպես շատ բան մարդկանց արարքից, այդ ել հասկանալ չեր կարողանում:

Այդ բանը հասկացավ նա նույն որը յերեկոյան, յերբ իրենց բոլորին քշեցին տների մեջ և փակեցին: Ծովանը վախից դողում եր: Մտածելու շատ բան կար, բայց լուսամուտին նայելով, սպասում եր թե ի՞նչ են անելու իրենց, վորովհետև բազմաթիվ անձանոթ թշնամիներ՝ մարդիկ տների մոտ կանգնած խոսում եյին, աղմկում. շրխկացնում ու թրիկացնում եյին ինչ-վոր բաներ, վոր կարծես ուզում եյին շուր տալ բոլորին: Բայց, քիչ հետո, իրենց տունը շարժվեց հանկարծ. կովերի և յեզների մեծ մասը ընկան կողքի, ուզեցին վեր կենալ—նորից ընկան. դարձյալ լսվեց ուժեղ, վայրենի մի սուլոց և իրենց գոմը շարժվեց շնկչեկալով:

Ու գնում եյին այսպես շխչեկոցով, թրիկոցով ու գոգուալով: Գնում եյին յերկա՛ր-յերկա՛ր... Տեղ-տեղ կանգնում եյին, լուսամուտներից մեկ ճրագի լույս եր ընկնում, մեկ յերեկվա լույս:

Տեղաբեր խոտ եյին բերում իրենց և նորից շրխկոցով քշում առաջ: Վերջապես, հասան այստեղ, վոր քաղաք եր կոչվում:



Ո՞, ինչ բան եր դա, այդ քաղաքը. թե մարդիկ, թե տները, թե սայլերը—բոլորն ուրիշ տեսակ եյին, բոլորն ել զարմանալի: Ծովանին զարմացնում եր մարդկանց առատությունն ու պարապությունը, տների մեծությունը, վորոնց մեջ վոչ մի գոմ չեր յերեվում, լայն փողոցները, վորոնց յեզերքին վոչ կանաչ կար, վոչ ցանկապատ, վոչ առու...Զարմանալի յեր: Զկային և շներ, խոտի գեղեր, մանավանդ գեղեր, գեղեր...Չե, այդ քաղաք ասվածը մի բան չի:

Նախիրը քաղաքի միջով տարան քաղաքի ծայրը և արին մի մեծ բակ: Այդաեղից ել տավարի հոտ եր տալիս, ինչպես ճերմակ տների մոտ յեղած բակից:

Գիշերը հանգստացան այդտեղ, իսկ առավոտը ոտար մարդիկ յեկան նայեցին իրենց, համբեցին: «Քանի՞ հատ ե», հարցրեց մեկը: «Չորս հարյուր» պատասխանեց մյուսը, և գնացին: Հետեւյալ որը նորից նոր մարդիկ յեկան: Յեվ այսպես՝ որը մի քանի անգամ մարդիկ եյին գալիս նրանց նայում, խոտ տալիս և տանում մոտիկ գետը ջրելու: Իսկ ամեն առավոտ գալիս եր քիչ խոսող մի մարդ, վորին բժիշկ եյին ասում, և մի յերկու ուրիշ մարդ, վոր լսում եյին նրան և միշտ մի քանի կով, յերինջ, յեղ ջոկում ու տանում: Այդ մարդը, վորին բժիշկ եյին ասում, ձեռք եր տալիս այս ու այն

կովին, յեղին, յերինջին, մեկ-մեկ նայում եր նրանց բերանները, և ում վոր ձեռք եր տալիս, նրան տանում եյին կամ նույն որը կամ հետեւյալ որը:

Այդպես տարան շատերին: Այդպես մի որ ել տարան Ծովանի մտերիմ ընկերունուն, վորից նա չեր հեռացել ամբողջ ձանապարհին: Յերբ նրան տանում եյին—նա յետ դարձավ, նայեց Ծովանին ու տիուր բառաչեց—Բա՛ա՛...Ծովանի սիրտը մղկտաց: Նա պատասխանեց նույն բառաչով, և նրա աչքերը լցվեցին արցունքներով: Ո՞ւր տարան արդյոք ընկերունուն, ինչո՞ւ տարան...Ո՞ւր են տանում առհասարակ այդ յեզներին, կովերին, յերինջներին. ո՞ւր են տանում այսպես ամեն որ, և ինչո՞ւ տարածը յետ չեն բերում,—միտք եր անում Ծովանը միկնույն տեղը կանգնած, նայելով դարպասին, վորի յետեր ծածկվեց ընկերունին: Միտք եր անում տարակուսած և, ինչպես մեծ մասը մարդկանց խորհրդավոր արարքների, այդ ել չեր հասկանում: Նրա տիսրությունն ավելացավ մանավանդ գիշերը, յերբ մնաց անընկեր...Ու չկարողացավ քնել. բոլոր ժամանակ մտածում եր՝ թե իրեն ուր են տանելու. արդյոք ի՞նչ անհայտ ու խորհրդավոր տեղ...Մյուս կովերը, յեզները քնել եյին հանգիստ: Բայց Ծովանը յերկա՛ր չեր կարողանում քնել. գլուխը դնում եր փորին, մի փոքր մնում, նորից վերցնում և զիք ննջում:


Լուսադիմին միայն նրա քունը տարավ և նա իրեն տեսավ մի մեծ, ընդարձակ, կանաչավետ դաշտում: Պայծառ որ ե. կանաչը փայլում ե արևի տակ, մոտիկ ձորակում շառաչում ե ջուրը, հեռվում՝ մեծ ձանապարհով շարանշարան սայլեր են անցնում, իսկ ավելի հեռվում՝ մշուշ ե, մուժ, և սարերը հալվում են կտպույտ մուժի մեջ: Յեւ գաշտում այսպես լավ ե. մողիները խաղում են իրար հետ, կովերը կանգնած՝ հանդարտ արոճ են անում պոչները մեջքերին գցած: Ու իր մայրը, ինչպես միշտ, սպիտակ կուրծը փորի տակ կախած, տաք արևի տակ լիզ ե տալիս իրեն...Մայրը լիզում ե, իսկ ինքը վիզը հետզհետե յերկարում ե նրա առաջ ու աչքերը փակում հաճույքից:

Մեկ ել՝ հանկարծ նա սաստիկ ցավ զգաց կողքին. աչքերը բացեց և իր առջև տեսավ այն մարդուն, վորին բժիշկ եյին ասում: Նրա մոտ կանգնած եյին և այն յերկու մարդը, վոր ամեն որ գտնիս եյին նրա հետ:

«Ենեկել են ինձ տանելու» մտածեց Ծովանը և տնքալով, ակամա յելավ տեղից:

Բժիշկը մոտեցավ և ձեռ տվեց նրա փորին: Ծովանը դըժոն վոտը վերցրեց և մի քայլ արավ:

— Կանգնի՛ր, կանգնի՛ր, հիմար,—ասավ բժիշկը և նորից նայեց նրան:



Ծովանը անշարժ կանգնեց և սպասեց թե ի՞նչ են անելու: Բժիշկը յերկար նայելուց ու շոշափելուց հետո, վերջապես, զլուխը բարձրացրեց:

— Սա հորթ ունի:

— Հորթ ունի՛,—զարմացան մյուս յերկուսը և ուշադիր նայեցին Ծովանին:

Հետո նրանք ել, բժշկի նման, մոտեցան և շոշափեցին իր աջ փորը: Նրանցից մեկը, վորին կառավարչի ոգնական եյին ասում, հարցրեց բժշկին:

— Հորթը մեծ ե, փո՞քը:

— Յերեք-չորս ամսական, պատասխանեց բժիշկը:

— Ուրեմն հինգ ամիս հետո պիտի ծնի՛,—խոսեց նորից կառավարչի ոգնականը:

— Բնական ե,—պատասխանեց բժիշկը:

— Կովս ի՞նչպես ե. լա՞վս ե...

— Այո՛, ասավ բժիշկը.—այս տեսակ կովերը շատ կաթնատու են լինում...բացի գրանից—ջահել եւ:

Ու խոսելով յերեքը միասին հեռացան:

Ծովանը յերկյուղով նայեց նրանց յետևից. արդյոք ի՞նչ են անելու իրեն, ո՞ւր են տանելու...Սակայն, քիչ հետո, բոլոր նրանց, վորոնց բժիշկը ձեռք եր տվել՝ տարան, իսկ իրեն՝ Ծովանին թողին: Այս հանգամանքը զարմացրեց Ծովանին. ուրեմն կարող ե պատահել, վոր բժշկի նայելուց հետո չտանե՞ն...Այ զարմանալի բա՞ն...

Ու այդ որը վոչ-վոք չեկավ նրա յետևից, բայց հետևյալ որը նրան ջոկեցին տավարից, պողերը թոկ կապեցին և մեն-մենակ դուրս տարան բակից: Յեվ այդտեղ մի ծեր մարդ առաջ արավ նրան ու քշեց...

10.

Ու քշեց մի որ, յերկու որ...Քշում եր ելի ինչ-վոր մե՛ծ, յերկար-յերկա՛ր ճանապարհով. քշում եր հանգարտ, տեղ-տեղ հանգստանալով, տեղ-տեղ իրան—Ծովանի հետ խոսելով... Յերկու որում նրանք անցան շատ գյուղեր, իսկ յերբորդ որը մտան մի դաշտ, ուր ամեն ինչ ծանոթ եր թվում Ծովանին: Նեղ գաշտը, վոր ընկած եր յերկու սարի արանքում, անտառը, վոր սարն ի վեր բարձրանում եր գեղի յերկինք, գետը, վոր հոսում եր ճանապարհի յերկու արածում եր կովերի մի մեծ խումբ... զրանք ել կարծես ծանոթ եյին: Ծովանը նայեց կովերին, մզզաց և հանկարծ բառաչեց բարձր ու զիլ ձայնով—բա՛ա... Կովերից մի քանիսը գլուխները բարձրացրին և նրան նայեցին, ապա նրանցից մեկը Ծովանին պատասխանեց նույն բարձր ու զիլ բառաչով: Ծովանը պոչը թափ տալով՝ քայլերն արագացրեց գեղի կովերը գնալու, բայց ծերունին չթողեց:—Ո՞ւր ես գնում, հիմար, ո՞ւր... ասավ, քարով խփեց և առաջ քշեց:

Նրանք շարունակեցին ճանապարհը և շուտով մտան գյուղ: Դա ել ծանոթ եր թվում Ծովանին. ճամփան, տները, ծառերը—բոլորը ծանոթ եյին կարծես:

Ճանապարհի յերկու կողմը մարդիկ հավաքված խոսում եյին, յերեխաները վեգ եյին խաղում: Յերբ Ծովանը զգույշ քայլերով մոտեցավ նրանց, հանկարծ լսեց իր անունը, ու փափախով մի մարդ առաջը կտրեց:


— Արա՛, ես մեր կովս ա, մեր Ծովանը...

Ծերունին ինչ-վոր բան ասավ և ուզեց քշել, բայց ամեն կողմից մարդիկ թափվեցին և չթողին քշի:

Ու խմբով Ծովանին առաջ արին ու տարան:

— Ծովանը յեկավ, Ծովանը յեկավ, — կանչում եյին յերեխաները առաջ վաղելով:

Մի քանի բոտեյից Ծովանն արդեն իր նախկին տերերի հին գոմի գուանն եր: Նրան շրջապատել եյին ծանոթ դեմքեր—մեծ տերը, վոր կանգնեցրեց իրեն ճամփին, նրա կինը, յերեխաները, հարեվանները... Քիչ հետո յեկավ նախկին վորքը տերը, նրա կինը: Բոլորն ել նայում եյին զարմացած և ուրախ-ուրախ խոսում իրար հետ, իսկ վորքը տերը և նրա կինը նայում եյին պատի մյուս կողմից, նայում եյին և մյուսների հետ չեյին խոսում...



— Ծովանն ե ելի, ասավ վորքը տերը կնոջը:
— Դրուստ վոր, խոսեց կինը պատի զլսից, ձեռը կովին մեկնելով. — Ծովա՞ն, Ծովա՞ն, Ծովա՞ն...

— Բ' մմմ...

— Զա՞ն:

— «Զա՞ն», — առաջ յեկավ մեծ յեղբոր կինը. — Ել ի՞նչ ե: Զեզ համար են գտել. յեկե՞ք, տեր դառեք... վոնց ել «Զա՞ն» ե ասում:

— Դե՛, շատ մի խոսի, — վրա բերեց պատի զլսից վորքը յեղբայրը. — Ինց մի տեր եք դառել վոր...

— Զե՛, տերը դո՞ւ ես, շարունակեց մեծ յեղբոր կինը:

— Հիմի կերեա ո՞վ ա, — ասավ վորքը յեղբայրը և գնաց: Նրա հետ և կինը:

Մեծ յեղբայրը մի քանի անգամ ուզեց միջամտել խոսակցության, բայց ատամները սեղմեց և լռեց:

Յեղբայրները իրար հետ չեյին խոսում: Հին վեճը նրանց մեջ տակավին շարունակվում եր: Կովի անհայտանալուց հետո՝ նրանք մեղաղբում եյին իրար կովը թագուն ծախելու մեջ: Բայց, վորով հետեւ վկաներ չկային, գործը միշտ հետաձգվում եր դատարանում, և թե յեղբայրները, թե նրանց կանայք, իրար հետ կովելու ժամանակ, միմյանց անվանում եյին «կովի գող»:

— Վա՛յ կովի գող զլսիդ, ասում եր մեծը վորքին:

— Գողի ձենն ա գալիս, պատասխանում եր վորքը:

Իսկ այժմ, յերբ Ծովանը դանվեց—վորքը գանգատվեց, վոր իր կովը, իր յերկու տարի առաջ կորած կովը գտնվել ե, բայց մեծ յեղբայրը անիրավաբար ուզում ե սեփականել, ուստի խնդրում ե արգարություն—կովը առնել յեղբորից և տալ իրեն: Իսկ ծերունին, կովը քաղաքից բերող ծերունին նույնպես, իր հերթին, գանգատ տվեց, վոր այդ կովը, իրենից խլված կովը՝ գնել ե քաղաքի սպան-զանոցում ծառայող իր վորդին, վոր կառավարչի ոգնական ե այնտեղ, գնել ե այն ժամանակ, յերբ ուզում եյին մորթել:

Բայց նրան վոչ-վոք չեր հավատում:


Սյսուամենայնիվ, գործին ընթացք տվին:

Յեկ Ծովանն այժմ յերեք տեր ուներ:



Главлит № 38964

Тип. Госиздата ССР. Армении,



Тираж 4000

Москва, Арм. пер. № 2.

ԳԻՒԾ ՅՈ ԿՈՊԵԿ



8486